

Գործունէութիւնն, զոր հանգուցեալ Հոգեւոր Տէրը իւր կեանքի երկար տեսողութեան, թէ իբրեւ Բահանայ Ս. Սեղանոյն, թէ իբրեւ Հովիւ իւր ժողովուրդին եւ թէ իբրեւ Հովուապետ կաթողիկէ Հայոց բարգաւաճած է այնքան արդիւնաւից կերպով ի փառս Աստուծոյ, յօգուտ եկեղեցւոյ եւ ի նպաստ Ազգին, առիթ ունեցած ենք համառօտիւ ներկայացնել մեր ընթերցողներուն<sup>1</sup>:

Կաթողիկէ հայ ժողովուրդը, ըլլայ զաւստներու մէջ, ըլլայ Կ. Պոլիս եւ Բէյրութ, վայելած է իր Հովուապետին բարեհամբոյր հովուութիւնը եւ պիտի մնայ յաւէտ երախտազէտ Անոր հանդէպ, որ գիտցաւ ամենուրեք պաշտպան հանդիսանալ հայ ժողովուրդի շահերուն եւ վաստակեցաւ անոր բարօրութեան համար արդիւնաշատ:

Արդեամբք իր ջանքերուն բարձրացաւ ի Բէյրութ նորակառոյց Հայրապետարան եւ կազմակերպուեցան կաթողիկէ հայ թեմերը աշխոյժ առաջնորդներով:

Միրելի է մեզ արձանագրել այս տեղ, որ հանգուցեալ Հոգեւոր Տիրոջ գործունէութեան պսակն եղաւ Վիեննայի Մխիթարեան Միաբանութեան Դպրոցն ի Բէյրութ, որ բացուեցաւ տարւոյս հոկտեմբերի սկիզբը, Նորին բարեացակամ հաւանութեամբն ու քաջալերութեամբք: Վստահ ենք, թէ այդ Մխիթարեան Դպրոցը իւր փայլուն եւ օգտաւէտ գործունէութեամբ անմահ պիտի պահէ յիշատակը Անոր, որ պատճառ եւ քաջալեր եղաւ այսպիսի գեղեցիկ եւ ազգօգուտ հիմնարկութեան մը:

Տէր պայծառացնէ ի լոյս մշտնջեան Անոր բարի Հոգին:

Խմբագրութիւն «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ», ի:

**ԸՆՏՐՈՒԹԻՒՆ**

**ԳՐԻԳՈՐ ՊԵՏՐՈՍ ԺԵ. ԱՂԱՃԱՆԵԱՆ**

**ԿԱԹՈՂԻԿՈՍ-ՊԱՏՐԻԱՐՔԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

Կը նօթճէ Բէյրութէն հեռագիր մը, թէ Տէր Փրանկիսկոս Աղաճանեան, տիտղոսաւոր եպիսկոպոս Կոմանայի, տարւոյս նոյեմբեր 30ին հռչակուած է Գրիգոր Պետրոս ԺԵ. կաթողիկոս պատրիարք Տանն Կիլիկիոյ:

Կը փութանք յայտնել մեր ուրախութիւնը այս բարեյաջող ընտրութեան առթիւ: «Հանդէս Ամսօրեայ», պիտի անդրադառնայ այս ընտրութեան առաջիկայ յունուարի թուին մէջ:

Խմբագրութիւն «ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵԱՅ», ի:



**Հ. ՅԱԿՈՐ Ժ. Վ. ՔՕՍԵԱՆ**

Վիեննայի Մխիթարեան Միաբանութիւնը տարւոյս ապրիլ 27ին կորսնցուց իւր գրասէր եւ զիտնական միաբաններէն մին յանձին Հ. Յակոբ Ժ. Վ. Քօսեանի եւ «Հանդէս Ամսօրեայ» կ'ողբայ իւր վաստակաւոր աշխատակցին կորուստը:

Հանգուցեալը ծնունդն էր Բարձր Հայոց, ծնած ի Կարին 27 մայիս 1865: Հայրը՝ Պօղոս եւ մայրը՝ Երանուհի (ծնեալ Էֆթեան) կը նուիրեն իրենց զաւակը եկեղեցական կրօնման: Պատանին Փիլիպպոս, այսպէս էր անոր մկրտութեան անունը, 1880, յունիս 12ին կը հասնի Վիեննա: ուր 1882, մարտ 25ին կ'անդամագրուի Մխիթարեան Միաբանութեան. աւարտելով ուսման ընթացքը 1887, հոկտեմբեր 2ին կ'ընդունի Գեր. Արսէն Այտընեանէ բահանայական ձեռնադրութիւնը:

Հ. Յակոբ Քօսեանի առաքելական եւ դպրոցական գործունէութեան ասպարէզը կը տարածուի Զմիւռնիա, Կ. Պոլիս եւ Կարին: Երկար տարիներ գործած է Զմիւռնիա իբրեւ տեղւոյն Մխիթարեան եկեղեցւոյ ժողովրդապետ եւ Մխիթարեան Դպրոցի ուսուցիչ: 1910ին կ'առաքուի Կարին, ուսկից կը ստիպուի հեռանալ 1915 նոյեմբերին, երբ տեղահանուած էր արդէն Կարնոյ հայ ժողովուրդը: 1916—1937 անցուց Կ. Պոլիս, նուիրուած գրական աշխատութիւններու, ուր եւ վախճանեցաւ 71ամեայ հասակին:

Հ. Յ. Քօսեան անխոնջ աշխատասէր էր: Թէպէտ ծանրաբեռնուած էր ժողովրդապետական եւ ուսուցչական պաշտօններով, բայց կը ստեղծէր իրեն ժամանակ պարապելու գրականութեամբ ալ: Հետաքննող էր հնութեանց. կը հետազօտէր իւր գործու նէութեան շրջանին ազգային հնութիւնները, հայ մշակոյթի անցելոյն մնացորդները եւ ներկայիս պայմանները: Այս պրպտումներու արդիւնքն եղան իր երկու կարեւոր աշխատասիրութիւնները՝ Հայք ի Զմիւռնիա եւ ի շրջակայս եւ Բարձր Հայք:

«Բարձր Հայք» կ'ամփոփէ իւր ծոցը Կարին քաղաքի եւ անոր զիւղերու պատմական, տեղագրական, արձանագրական եւ ազգագրական նկարագրութիւնը: Առաջին ընդարձակ աշխատութիւնն է նուիրուած Բարձր Հայքին, գրուած տեղւոյն վրայ: Հեղինակը ամէն ջանք տարած է, մթերել աշխատութեանս մէջ նիւթեր Բարձր Հայոց պատմութեան ուսումնասիրութեան համար: Հեռու մատենադարաններէ չէ կրցած աչքի առաջ ունենալ իր նախորդներու տեղագրութիւնները եւ օգտուիլ պատմական աղբիւրներէ. բայց նոր նիւթերը, գորոնք յաջողած է ձեռք բերել, անհունապէս երախտապարտ պիտի թողուն պատմասէրն եւ ազգագիրը: Անիկա վերջինն է, որ նկարագրած է Կարնոյ բազմաշատ հայութեան նիստն ու կացը, հողին վրայ նշմարելի հնութեան կոթողներն, արձանագրութիւններն եւ ցուցակագրած այն շրջանի հայերէն ձեռագիրները:

Նոյն ծրագրով եւ նոյն բարեխղճութեամբ նկարագրած է նաեւ Զմիւռնիոյ եւ իր շրջակայքի հին հայ գաղթականութեան անցեալն եւ ներկան. դարձեալ վերջին պատմիչը, որ ապագայ դարերուն աւանդած է այն բարեգարդ կողմանց հայ գաղութներու որպիսութիւնը:

<sup>1</sup> Հանդէս Ամսօրեայ, 1931, էջ 577—582 եւ 1934, էջ 193—196:

Կը ներկայացնեմ այս տեղ իր կարեւոր աշխատասիրութիւնները ի նպաստ հայագիտութեան, զանց ընելով յիշատակել մանր առթական յօդուածաշարքերը:

1. Հայք ի Զմիռնիս եւ ի ջրճահայս. Ա. եւ Բ. հատոր. Վիեննա 1899, 8<sup>o</sup>, էջք ԺԲ + 369 + Ժ + 161:

2. Տեկիզիի, Նագիզիի եւ Այոռնի Հայոց դպրոցները. Հանդ. Ամս. 1897, էջ 274—275:

3. Ռոչագ եւ Ռոչագի Հայերը. Հանդ. Ամս. 1898, էջ 206—208:

4. Մակիսա. Հանդ. Ամս. 1899, էջ 97—103:

5. Ակնարկ մը (Այոռնի) հետաքննական բեկորներու. Հանդ. Ամս. 1906, էջ 277—279:

6. Այցելութիւն մը ի Գոռ-Առաւ. Հանդ. Ամս. 1908, էջ 44—47:

7. Բարձր Հայք. հատոր Ա. Կարին քաղաքը. Վիեննա 1925, 8<sup>o</sup> մեծ, էջք ԺԲ + 496:

Բարձր Հայք. հատոր Բ. Կարնոյ գիւղերը. Վիեննա 1926, էջք Ը + 184:

8. Արժըթի եւ Ս. Լուսաւորչի վանքը. Հանդ. Ամս. 1899, էջ 338—340:

9. Ախալցխա. Հանդ. Ամս. 1902, էջ 79—85:

10. Գերեզմանատուն կաթողիկէ Հայոց Կ. Պոլսոյ: Ակնարկ մը նախկին եւ արդի Գերեզմանատան վրայ: Շիրիմներու, դամբարաններու յիշատակագրութիւնը: Վիեննա 1931, 8<sup>o</sup>, էջ 273:

11. Յուդայի հայերէն ձեռագրաց Սանասարեան Վարժարանի ի Կարին. Հանդ. Ամս. 1912, էջ 55—61. 1921, էջ 173—181, 486—493, 580—584 (Թ. 44—94):

12. Յուդայի հայերէն ձեռագրաց Արժնեան Վարժարանի ի Կարին (անտիպ):

13. Յուդայի հայերէն ձեռագրաց Կարնոյ գիւղերու (անտիպ):

14. Աքսորի ձամբան (Ա.) Վիեննա 1922, 8<sup>o</sup>, էջ 119:

15. Աքսորի ձամբան (Բ.) Անհաստատայիք — իրականք (անտիպ):

16. Աքսորի ձամբան (Գ.) Սեւ քախտ (անտիպ):

17. Աքսորի ձամբան (Դ.) Տարագրութիւն, Ազատութիւն (անտիպ):

18. Վերադարձ Կարնէն Կ. Պոլիս. 1915, նոյեմբեր — յունուար. տպաւորութիւններ (անտիպ):

Իր աշխատասիրութեամբ լոյս տեսած է գրաքար՝

19. Իննօրեայ պատրաստութիւնը տօնից Ս. Կոռնի եւ Սրտին Յիտուսի, հանդերձ յաւերժութեամբ աղօթից. Վիեննա 1901, էջ 187:

Աշխատութիւններս անմահ յիշատակ պիտի մնան անոնց հեղինակին անուան հայագիտութեան ծոցը:

Հանգիստ յաւիտենական իր հոգւոյն:

Հ. Ն. Ա.

## ՎԻԵՆՆԱՅԻ ՄԽԻԹԱՐԵԱՆ ՄԻԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ՎԱՆՔԻ ՇԻՆՈՒԹԵԱՆ ՀԱՐԻԻՐԱՄԵԱԿԸ

1837—1937

Այս տարի երկրորդ յօդուածն մ'ալ տօնեց Մխիթարեան Յարկս, ինքնին Մայր Վանքի շինութեան հարիւրամեակը:

Մխիթարեան Հայրերը 1810ին Տրիեստէն փախստական պանդուխտի ցուպն ի ձեռին ապաստանած էին Կայսերական քաղաքս Վիեննայիցիներու ոսկեղէն սրտին վրայ վստահացած: Չխաբուեցան անոնք իրենց վստահութեան մէջ: Հակառակ օրինական մեծ դժուարութիւններու կ'ընդունէին կարճ ժամանակի մէջ հրաման ու չնչին դումարով նաեւ տեղ՝ Կնդդաւորներու հին վանքին մէջ բնակութիւն հաստատելու: Այս բարեացակամ ընդունելութեամբ հալածական Հայրերու սրտին մէջ Նախախնամութեան հաւատքը երկնացող սնունդ մը կ'ընդունէր: Նոր կեանքի մը փարուծով կը ձեռնարկէին գործի: 1835 տարւոյն հրդեհը, որ կիսախարխուլ վանքը ծանր կը վտանգէր, առիթ կ'ըլլար իրենց հիմէն կանգնելու Մայր Վանքի շէնքը ապագայ դարերու համար — Հայ Ժողովուրդը ու անոր հետ ու անոր համար վանքը յաւիտեան ապրելու սահմանուած են: Այդ դարակազմիկ վայրկեանը Վանքի պատմութեան մէջ պէտք էր մեծագոյն հանդիսութեամբ տօնուէր: Ու 18 Հոկտ. 1837ին նորին վեհափառութիւնը Ֆերդինանդ Ա. կայսրը, ի ներկայութեան Մարիա Աննա կայսրուհւոյն, կայսերական եւ պալատական մեծանուն իշխաններու եւ իշխանուհիներու, խուռն բազմութեան մը առջեւ կը դնէր աւարտաքարը Մխիթարեան Մայր Վանքի շէնքին: Կայսերական աչքերուն առջեւ այդ արարողութիւնը բարեացակամ վերաբերմունքի նշան մըն էր արեւելքի քահանաներու հանդէպ, որոնք եկած էին Աւստրիոյ երկնքի տակ ապաստանարան մը փնտռելու. թերեւս նա կ'ընդունարէր այն մշակութային ու դաստիարակական հսկայ դերը, զոր կայսերական կրկնակ արժեւներու թելերուն տակ, նոր յարկին մէջ անած հայրերը պիտի կատարէին հայ ազգին մէջ, փառքէն առանց անմասն թողլու նաեւ իրենց երկրորդ հայրենիքը՝ Աւստրիան: Ու կանգնեցան ամբողջ հիմքերու վրայ հաստափոր պատեր, կարծես ամբողջ աշխարհ մը կրելիք ըլլային. այո, կրեցին անոնք Հայ Ազգի տառապանքի աշխարհը ու դեռ կը մնան կանգուն: